



«ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅԱՄԲ ԱՐԴԱՐԱՅՆԵՆՔ ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆԸ»

(Քարոզ՝ խոսված Մայր տաճարում 1995 թ. մարտի 5-ին)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«Որ զօրէնս սրբութեան պահոց նախ ի դրախտին ասանդեցեր»:

Այսօր Հայաստանյայց Եկեղեցիները հիշատակում են Մեծ պահոց երկրորդ կիրակին՝ Արտաքսման կիրակին: Արտաքսում բառը Հին Կտակարանի Ծննդոց գրքի առաջին գլուխներից է գալիս, երբ Աստված ստեղծեց մարդուն, որպէս կատարելությունն իր արարչագործության: Մարդն ապրեց վայելքներով ու գեղեցկություններով հարուստ դրախտում: Այդ ամենից բացի Աստված նրան ընկեր ևս տվեց: Մարդն, սակայն, այս ամենն ունենալով, դարձյալ սայթաքեց ու մեղքի մեջ ընկավ:

Արտաքսման կիրակին առաջին մարդկանց՝ Ադամի և Եվայի մեղանշականության հիշատակն է, նրանց՝ դրախտի փափկությունից հեռացնելու մի տեսակ անդրադարձը: Հին Կտակարանը մեզ ուսուցում է ապաշխարության մասին որպէս մարդու մեղանշականության հետևանք: Ապաշխարության օրենքը շատ բացահայտ դրսևորվում է Իսրայելի մարգարեների կյանքում: Մովսէսը, երբ Եգիպտոսից իր ժողովրդին պիտի ազատագրեր և տաներ դեպի խոստացված երկիր, քառասուն օր քաշվեց անապատ՝ ճիգնելու, խոկալու, խորհրդածելու և անդրադառնալով իր կարողություններին և Աստծու տված հնարավորություններին, որպէսզի կարողանար իր ժողովրդի առաջնորդը լինել:

Նոր Կտակարանում տեսնում ենք, թե Հովհաննէս Մկրտիչը իր քարոզությունը սկսելուց քառասուն օր առաջ քաշվեց անապատ, այնտեղ պահեցողությամբ և աղոթքով պատրաստվեց իր հրաշալի քարոզությամբ ճանապարհ հարթելու եկող Փրկչի առջև՝ աշխարհի Մեսիայի առջև: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ևս 40 օր քաշվեց անապատ մի տեղ, այնտեղ աղոթքով, ճգնությամբ իր Հոր հետ կապվելու և իր առաքելությանը նախապատրաստվելու, որպէսզի կարողանար Աստծու կամքը ի կատար ածել:

Նույն ձևով, սիրելի հավատացյալներ, Հայաստանյայց Եկեղեցին, ինչպես տեսնում եք, սուգի մեջ է, որովհետև ապաշխարության քառասունօրյա շրջանը անցյալ երկուշաբթի օրվանից սկսվեց: Մեր եկեղեցու խորանները սևով են վարագուրված, մեր հոգևորականների զգեստներն ու փիլոնները սև գույն են ստացել և մահ ամենուր սկսվել է ավելի խոնարհ և ապաշխարության ձայնով մեղեդիների երգասացությունը: Այս ձևով եկեղեցին իր շքեղությունից նվազեցվում է, թրպեսզի ժողովուրդը ևս հրավիրվի ապաշխարության: Այժմ պիտի ասենք, թե ինչ է ապաշխարությունը:

Ապաշխարության շրջանը հիմնականում աղոթքի, պահեցողության, ապաշխարության խորհրդածության, ներքին անդրադարձի և հատկապես բարեգործության մի շրջան պետք է լինի: Հաճախ երբ հիվանդանում ենք, բժիշկները խորհուրդ են տալիս հրաժարվել յուղոտ ուտելիքներից: Պահոց շրջանում եկեղեցին խորհուրդ է տալիս 40-օրյա պահեցողությամբ, բանջարակերությամբ, ոչ յուղոտ ուտելիքներ ուտելով զսպել մարմինը՝ նրա ցանկությունները սահմանափակելով: Այդպիսով մարմնական և զգացական պահանջների նվազումով խթանվում է աղոթքով մարմնի պակասությունը հոգևոր իմաստով լիցքավորվելու և ամբողջացնելու անհրաժեշտությունը:

Այս դեպքում միայն մարդը կկարողանա դառնալ հոգու և մարմնի մի ամբողջություն: Մարմնական պահանջները սահմանափակելով ավելի մեծ հնարավորություն է ստեղծվում անցնելու հոգևոր վիճակից դեպի աստվածայինը, դեպի սրբազանը, դեպի վսեմը կյանքի մեջ:

Ապաշխարությունը կարևոր է մարդու համար: Միայն մեղքի անդրադարձը փրկություն չի տա մարդուն, այլ այդ մեղքի վրա, սատանայի վրա պետք է մեր կրունկը դնենք նրա գլուխը ճգմելու համար, որպեսզի կարողանանք հաղթել մեղքի բռնությունները, մեղքի կապանքները, մեղքի առթած փորձությունները մեր կյանքի մեջ: Ուրեմն ի՞նչ է ապաշխարությունը: Ապաշխարությունը մեղքի համար կատարված զոհողությունն է, մեղքի համար մարդու կատարած նյութական և բարոյական զոհողությունը: Եթե այդ զոհողությունը՝ ապաշխարությունը, տեղի չունենա, արդարացում և փրկություն չի կարող գոյություն ունենալ, որովհետև մեղքի վարձքը, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, մահն է, բայց ապաշխարությամբ մեղքի կապանքները ճգմելով, քանդելով, ոչնչացնելով, մարդ հասնում է արդարության վսեմ պսակին: Մեղքը գաղտնորեն հետևում է մեզ՝ մեր կյանքի ամբողջ ընթացքում: Այն իր մեջ ներքաշելով մեզ, մեր կատարած բոլոր զոհողությունները մեկ պահով կարող է ջնջել: Այդ պատճառով էլ շարականագիրը ապաշխարության այս օրերին ասում է. «Մեղք իմ բազում են յոյժ, ծանր են քան զառազ ծովու, քանզի քեզ միայնոյ մեղայ, ողորմեա ինձ, Աստուած»:

Եվ կամ մեղքը շարականագիրը նմանեցնում է այն փոթորկալից ծովին, որի մեջ է ընկել անհատը և մեղքն ամեն վայրկյան ընկուզելու է, խեղդելու է նրան: Ալեկոծության մատնված անհատը, որը մեղավոր է, խնդրում է նավապետից՝ ազատել իրեն այդ մեղքի ալիքներից և հասցնել նավահանգիստը բարության:

Սիրելի հավատացյալներ, ապաշխարող մաջդը մահ պետք է բարեգործ լինի: Ապաշխարության պահեցողության այս շրջանում հատկապես մարդ պետք է իր մոլորություններից հեռանա: Եթե մա չափազանց խմող է, պետք է հրաժարվի խմելուց, ոգելից ըմպելիքներից, եթե ծխող է, պետք է զիջի ֆրեն այդ մոլորությունից: Դուք ինձնից ավելի լավ գիտեք, թե ինչպիսի այլ

մոլորություններ կան, որոնց մեջ ընկնում է մեր երիտասարդությունը և խաբվում: Դրանցից ևս պետք է հրաժարվենք: Այդ ճահճուտի մեջ ընկած բոլոր անհատները, ապաշխարության այս օրերին հատկապես պետք է անդրադառնան իրենց վարքագծին:

Այսպիսով կարողանանք Աստծու սուրբ երեսը տեսնելու մեծագույն հաճույքը վայելել ապաշխարությամբ և մոլորություններից հեռու մնալով, ողորմությամբ:

Ամեն մարդ կարող է ողորմած լինել, դրա համար բնավ էլ անհրաժեշտ չէ հարուստ լինել, մեծ քսակներ ունենալ: Ողորմածություն է նաև մի բարի խորհրդով ընկածին, կարիքավորին օգնության ձեռք մեկնելը: Բայց եթե մենք հնարավորությունն ունենք մեր ունեցածից բաժին հանել սղքատին, սովածին, բանտարկյալին, որբանոցների մեջ ապրող երեխաներին, ծերանոցներում միայնակ մնացած ծերերին, հոգեբուժարաններում և այլ հիվանդանոցներում տառապող հիվանդներին և բոլոր կարիքավորներին, չպիտի հապաղենք, չպիտի զլանանք: Մեր ողորմությամբ նաև ապաշխարությունը ամբողջացրած կլինենք:

Ողորմածությունը, գթառատությունը ապաշխարության թագն ու պսակն են:

Մենք՝ հայերս, 10-րդ դարում մի թագավոր ունեինք՝ Աշոտ 3-րդ: Նրա անվանը ժողովուրդը հրաշալի մի մակդիր էր ավելացրել՝ Ողորմած: Աշոտ 3-րդ Ողորմած թագավորը կարողացավ Ղարսից հայոց թագավորությունը Անի փոխադրել: Թագավոր դառնալուց հետո միայն նա կարողացավ Անիի Մայր տաճարում Հայոց Կաթողիկոսից իր թագն ստանալ: Նրա ամբողջ կյանքը բարեգործություն եղավ. օգնեց խեղճերին, շենացրեց երկիրը, հազար ու մի եկեղեցիներ, ճանապարհներ կառուցեց: Թագավորը Անի քաղաքի բոլոր այցելուներին հրավիրում էր ճաշելու իր հետ, օգտվելու արքայական սեղանից: Նա երբ հյուր չէր ունենում, իր հետ ճաշելու էր հրավիրում աղքատներին, ոսկի ափսեներն ու բաժակները նրանց էր տրամադրում: Երբ ժամանակը հասավ, թագավորը փակեց աչքերն ու հեռացավ այս աշխարհից, բայց նրա անունը 10 դար հետո էլ ահա հիշվում է: Նա մեր պատմության մեջ մնացել է իբրև Աշոտ Ողորմած հայոց շատ սիրելի ու պաշտելի թագավոր:

Սիրելի հավատացյալներ, ապաշխարության այս շրջանը մեզ համար, յուրաքանչյուրիս համար սեփական անձի փրկության ճանապարհ թող չլինի միայն, այլ այն թող լինի մեր ամբողջ ազգի, հանուր մարդկության համար աղոթքի, խնդրանքի, Աստծու օգնության, Աստծու խաղաղության հայցման մի շրջան, հատկապես մեր Հայաստանյայց Եկեղեցու համար, որը կորցրել է իր փեսային:

Հայոց Հայրապետը վախճանվել է և ապաշխարության այս շրջանում՝ ապրիլի 3-ին տեղի կունենա նոր Հայրապետի ընտրությունը:

Մի թողեք, որ միայն հոգևորականները աղոթեն, դուք ևս մեր կողքին, որպես Հայաստանյայց Եկեղեցու զավակներ, հայ ժողովրդի զավակներ, մեզ հետ աղոթեցեք, որ Սուրբ Հոգին մեզ առաջնորդի և բոլոր պատգամավորների սրտի մեջ խոսի, որպեսզի հնարավոր լինի ընտրել այն լավագույնին, որ Աստված է մեզ թելադրում: Ահավասիկ այս ուժը Աստված աղոթքի

միջոցով բոլորիս տվել է: Օգտվենք Աստծու տված երանական այս մեծ թոժից: Վստահ եղեք աղոթքով, ապաշխարությամբ, ողորմածությամբ պիտի կարողանաք այն հոգևոր տաճարը ստեղծել ձեր մեջ, ուր հարուցյալ Փրկիչը իր Սուրբ Հարության խորհրդով պիտի գերեզմանից հառնի և բնակվի ամեն մեկիս մեջ: Միշտ և հավիտյան: Ամեն:

ՆԵՐՍԵՍ ԱՐՔԵՊՍ. ՊՈԶԱՊԱԼՅԱՆ

